**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երեւան 10 դեկտեմբերի 2013թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի նոյեմբերի 5-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորություն-

ների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2013 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագիրն (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2013 թվականի նոյեմբերի 5-ին Երեւանում՝ առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով ամրապնդելու եւ խորացնելու եւ Հայաստանի Հանրապետության զարգացմանը նպաստելու նպատակով:

**2.** Համաձայնագրի 1-ին հոդվածի 1-ին եւ 2-րդ պարբերությունների համաձայն՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու կառավարությունների կողմից փոխադարձ համաձայնությամբ ընտրվելիք այլ հասցեատերերի (վարկառուների) հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից (այսուհետ՝ Բանկ) ստանալ՝

- «Վերականգնվող էներգակիրների աջակցություն III» ծրագրի իրականացման եւ համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար՝ ֆինանսական օժանդակություն մինչեւ 2.000.000 եվրո գումարի չափով,

- «Համայնքային ենթակառուցվածքներ II, 2-րդ փուլ» ծրագրի իրականացման եւ համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար՝ ֆինանսական օժանդակություն մինչեւ 1.500.000 եվրո գումարի չափով,

- «Գերմանահայկական հիմնադրամ (ԳՀՀ) ծրագիր՝ «Կայուն տնտեսական զարգացում» առաջնային ոլորտում» ծրագրի համար՝ արտոնյալ վարկ մինչեւ 15.000.000 եվրո գումարի չափով, ինչպես նաեւ մինչեւ 750.000 եվրո գումարի չափով ֆինանսական օժանդակություն՝ վերոհիշյալ ծրագրի իրականացման եւ համակարգման համար անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար,

- «Հոսանքահաղորդման բաց ծրագիր (Հայաստան-Վրաստան հոսանքահաղորդիչ ուղի/բարձրավոլտ էլեկտրակայաններ)» ծրագրի համար՝ արտոնյալ վարկ մինչեւ 75.000.000 եվրո գումարի չափով,

- «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում, 1-ին փուլ» ծրագրի համար՝ արտոնյալ վարկ մինչեւ 18.500.000 եվրո գումարի չափով:

**3.** Համաձայնագրի 1-ին հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ նշված ծրագրերը Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ փոխադարձ համաձայնությամբ կարող են փոխարինվել այլ ծրագրերով, իսկ 5-րդ պարբերության համաձայն՝ նշված ֆինանսական օժանդակությունները կփոխարինվեն վարկերով, եթե դրանք չօգտագործվեն այդ միջոցառումների համար:

**4.** Համաձայնագրի 1-ին հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ եթե Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության կառավարությանն ավելի ուշ ժամանակահատվածում հնարավորություն է ընձեռում Բանկից ստանալ լրացուցիչ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ՝ Համաձայնագրով նշված ծրագրերի նախապատրաստման կամ իրականացմանն ու համակարգմանն անհրաժեշտ հարակից միջոցառումների անցկացման համար, ապա կիրառվում է սույն Համաձայնագիրը:

**5.** Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վերը նշված գումարների օգտագործումը, գումարների տրամադրման պայմանները, ինչպես նաեւ հանձնարարականների տրման ընթացակարգը Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործող օրենսդրության համաձայն սահմանվում են Բանկի եւ վարկեր կամ ֆինանսական օժանդակություններ ստացողների միջեւ կնքվող պայմանագրերում:

Ըստ Համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ պարբերության՝ նշված գումարների հատկացումները չեն կատարվում, եթե նախնական հատկացման տարվան հաջորդող ութ տարիների ընթացքում չեն կնքվում համապատասխան վարկային կամ ֆինանսական պայմանագրեր: Ընդ որում, նշված գումարների համար ժամկետն ավարտվում է 2020 թվականի դեկտեմբերի 31-ին, իսկ Համաձայնագրի 1-ին հոդվածի

2-րդ պարբերության 3-րդ կետում նշված գումարի համար՝ 2017 թվականի դեկտեմբերի 31-ին:

**6.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

**-** վճարել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման եւ իրականացման շրջանակներում առաջացող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը եւ պետական այլ տուրքերը,

**-** վարկի եւ ֆինանսական օժանդակության օգտագործումից անհրաժեշտաբար բխող՝ ծովային, ցամաքային եւ օդային ճանապարհներով անձերի եւ գույքի տեղափոխման համար ուղեւորներին եւ առաքողներին տալ տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չձեռնարկել միջոցներ, որոնք կբացառեն կամ կդժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, իսկ անհրաժեշտության դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար,

- Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ երաշխավորել Բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրով վարկառուների ստանձնած պարտավորությունների, եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ,

- Համաձայնագրի 2-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն՝ Բանկին տալ երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից, եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը չէ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

**1**. 2013 թվականի նոյեմբերի 5-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջեւ ֆինանսական համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

10 դեկտեմբերի 2013 թվականի
ՍԴՈ-1129